



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

**Հ Ր Ա Մ Ա Ն**

No 1460-Ճ/Ք

« 01 » 10 2009

**ՆԱԽԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԻԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2802 «ՄԱՆՎԱԾՔԻ ԵՎ ՄԱՆՎԱԾՔԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԵՆՔԱՎԱՐԱԿԵՏ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԵՉ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 8 արձանագրային որոշման 14-րդ «Հայաստանի Հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների և որակավորումների՝ կարողությունների ձևավորմանը միտված պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգին ու գործողությունների ցանկին հավանություն տալու մասին» կետով հավանության արժանացած հայեցակարգի 4.7 կետը, ՀՀ ԿԳ նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացությունները, ինչպես նաև նպատակ ունենալով առանձին ուսումնական հաստատություններում մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկել 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման պետական կրթական չափորոշիչը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:
2. Նախարարության աշխատակազմի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությանը՝ մինչև 2010 թվականի դեկտեմբերի 30-ը նախարարի հաստատմանը ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը, որոնցում փորձարկման նպատակով ներդրվելու է 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման պետական կրթական չափորոշիչը:

3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման պետական կրթական չափորոշիչը ներդնել 2011թ. սեպտեմբերի 1-ից՝ մեկ պարբերաշրջանի ընթացքում փորձարկելու նպատակով:
4. «Կրթության ազգային ինստիտուտի» ՓԲԸ տնօրենին /Ն. Ղուկասյան/ ապահովել 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման պետական կրթական չափորոշիչի փորձարկման ընթացքի վերաբերյալ ուսումնական հաստատություններից ստացված վերլուծական հաշվետվությունների վերլուծությունը և լրամշակման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկի ներկայացումը:
5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման պետական կրթական չափորոշիչը 22 արդարադատության նախարարություն պետական գրանցման ներկայացնել փորձարկման պարբերաշրջանի ավարտից և սահմանված կարգով վերանայելուց հետո:
6. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:


**ՆԱՍԱՐԱԸ**
**Ա. ԱՇՈՏՅԱՆ**

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2802 «ՄԱՆՎԱԾՔԻ ԵՎ  
ՄԱՆՎԱԾՔԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԵՆԹԱՎԱՐՊԵՏ»  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԳԼՈՒԽ 1

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2802 «ՄԱՆՎԱԾՔԻ ԵՎ  
ՄԱՆՎԱԾՔԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԵՆԹԱՎԱՐՊԵՏ»  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության «Արհեստավոր» որակավորման աստիճանի 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորումը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հունիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 838-Ն որոշմամբ:

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագրի յուրացումն իրականացվում է ուսուցման

ա. առկա ձևով,

բ. դրսեկության (էքստեռնատ) ձևով:

3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագրի յուրացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) կրթության առկա ձևով՝

ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 1 տարի,

բ. հիմնական կրթության հիմքով առանց միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի՝ 1 տարի.

գ. հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում՝ 3 տարի:

2) դրսեկության (էքստեռնատ) ձևով.

կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշման:

4. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով՝ հիմնական կրթության հիմքով՝ առանց միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրին ուսումնառող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 1404 ժամ է, առավելագույն ծավալը՝ 2268 ժամ: Հիմնական կրթական ծրագիրը հիմնական կրթության հիմքով՝ միջնակարգ կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրի հետ համատեղելու դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 104 շաբաթով:

## ԳԼՈՒԽ 2.

### ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2802 «ՄԱՆՎԱԾՔԻ ԵՎ ՄԱՆՎԱԾՔԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԵՆԹԱՎԱՐԱԿԵՏ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԱՎԱՐՏԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորմամբ մասնագետը կարող է իրականացնել հետևյալ զբաղմունքները.

- 1) մշակող՝ թելի, մանածագործական արտադրության,
- 2) պատրաստող՝ թելի, մանածագործական արտադրության,
- 3) վերջնամշակող՝ թելի, մանածագործական արտադրության,
- 4) գզող՝ թելի, մանածագործական արտադրության,
- 5) կորզանող՝ թելի, մանածագործական արտադրության,
- 6) ենթավարպետ՝ հաստաթելերի և/կամ մանածագործական արտադրության,
- 7) տեսակավորող՝ անվա բրդի,
- 8) լվացող՝ անվա բրդի,
- 9) մանող,
- 10) հիւնող,
- 11) կշռաբաշխող՝ բամբակի:

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորմամբ շրջանավարտի մասնագիտական գործունեության պարտականություններն են.

1) զգել բնական ծագման մանրաթելերը, հեռացնել կողմնակի խառնուկները, ձեռքի կամ ինքնաշարժ սանրերով վերջնամշակել թելը և այն տեսակավորել՝ ըստ գույնի ու համարների,

2) տեսակավորել անվա բուրդը՝ նախապես որոշելով վերջինիս տեսակն ու գնահատելով մանրաթելերի երկարությունը, հաստությունը (բարակությունը) և խճճվածությունը,

3) լվանալ անմշակ բուրդը՝ լվացող մեքենաների և ագրեգատների մեջ համապատասխան լվացող լուծույթներ պատրաստելով ու դրանց ջերմաստիճանը և խտությունը կարգավորելով,

- 4) գտել, մշակել և զգել բամբակահումքը,
- 5) մշակել վուշահումքը և մետաքսահումքը,
- 6) տեսակավորել և մշակել մանածագործական այլ հումքատեսակները,
- 7) արտադրել վերջնամշակված մանվածք՝ մանող և մանող-ոլորող մեքենաներով,
- 8) վերացնել ժապավենաթելի, հաստաթելի և մանվածքի խզվածքները,
- 9) հսկել արտադրված մանվածքի որակը,
- 10) տիրապետել մանվածքային մեքենաների և սարքավորումների տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկություններին ու դրանց աշխատանքային սկզբունքներին,
- 11) հանել և տեղադրել թելակոճերը, թելաթմբուկներն ու իլիկները,
- 12) կրճատել արտադրական թափոնների ծավալն ու զանգվածը,
- 13) բարելավել սեփական աշխատանքի արդյունավետությունն ու արտադրողականությունը:

## ԳԼՈՒԽ 3.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2802 «ՄԱՆՎԱԾՔԻ ԵՎ ՄԱՆՎԱԾՔԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԵՆԹԱՎԱՐՊԵՏ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

7. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար ապահովելու է հետևյալ ընդհանուր պահանջները.

1) ժամանակակից անհատի և քաղաքացու ձևավորման պահանջներին համապատասխան ազգային և համամարդկային մշակույթի ու պատմության վերաբերյալ գիտելիքների յուրացում, դրանք մասնագիտական գործունեության ընթացքում կիրառելու հմտությունների ձևավորում,

2) մասնագիտական ոլորտի ընդհանուր գիտելիքների յուրացում, որոնք բավարար հիմք են հանդիսանում մասնագիտական խնդիրների հետ կապված հանձնարարությունները կատարելու համար,

3) մասնագիտական տեսական ու գործնական գիտելիքները կիրառելով՝ արդյունավետ օգտագործել համապատասխան գործիքներ, սարքավորումներ, հարմարանքներ,

4) մասնագիտական գործառնությունները համապատասխան նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,

5) մասնագիտական տերմինաբանության ճիշտ ընկալում և կիրառում,

6) մասնագիտական գործունեության ժամանակ համապատասխան գործողությունների սոցիալական հետևանքները հաշվի առնելու հմտություն,

7) մասնագիտական ինքնագարգացման և կատարելագործման նպատակով իրեն անհրաժեշտ տեղեկությունները մասնագիտական աղբյուրներից ձեռք բերելու հմտությունների ձևավորում,

8) աշխատանքային խնդիրների լուծման ժամանակ պատասխանատվություն ստանձնելու, լուծումները հիմնավորված իրականացնելու կարևորությունը պատկերացնելու, նման աշխատանքի պատրաստ լինելու մակարդակ,

9) ինչպես ընդհանուր, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում աշխատելու համար հմտությունների ձևավորում:

ԳԼՈՒԽ 4.

ՊԱՀԱՆՁՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2802 «ՄԱՆՎԱԾՔԻ ԵՎ ՄԱՆՎԱԾՔԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԵՆԹԱՎԱՐՊԵՏ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

8. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում ապահովելու է.

1) ՀՀ սահմանադրության, տվյալ զբաղվածության բնագավառը կարգավորող նորմատիվ հիմնական ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթների իմացություն,

2) հայոց լեզվի տիրապետում,

3) մեկ օտար լեզվով հաղորդակցում,

4) առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոնները տիրապետելու իմացություն,

5) ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,

6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին:

7) հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների, վարվելակերպի, հաղորդակցման տարրական կանոնների իմացություն,

8) մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների վերաբերյալ իմացություններ:

9. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում ապահովելու է.

1) էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկում,

2) արտակարգ իրավիճակների մասին պատկերացումների ձևավորում և արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին տիրապետում, փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքային և փրկարարական տեխնիկայի վերաբերյալ պատկերացումների ձևավորում, անհատական պաշտպանության միջոցների օգտագործման կարողություն:

10. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը ապահովում է շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետումը՝ օգտվելով աղյուսակ 1-ում բերված մոդուլներից:

11. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար ապահովում է ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերումը՝ օգտվելով աղյուսակ 2-ում բերված մոդուլներից:

#### ԳԼՈՒԽ 5.

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԻԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ  
2802 «ՄԱՆՎԱԾՔԻ ԵՎ ՄԱՆՎԱԾՔԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
«ԵՆԹԱՎԱՐՊԵՏ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

12. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագիրը իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ, որոնք տվյալ բնագավառում ունեն միջին և բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում և (կամ) տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ:

3) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը ունի համապատասխան մասնագիտական կրթություն և (կամ) մասնագիտական աշխատանքի փորձ:

4) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը կամ վարպետը:

13. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական

կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա) ապահովում, որոնք բովանդակությամբ համապատասխանում են տվյալ մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ցանկին:

2) յուրաքանչյուր առարկայի և մոդուլի, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերի համար (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքների) ձևավորվում են համապատասխան բազաներ. դասագրքեր, ուսումնամեթոդական և մեթոդական նյութեր, ձեռնարկներ, ուղեցույցներ, գործնական խաղերի կամ իրավիճակային սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ (անհրաժեշտության դեպքում), երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

14. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը.

ա. հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների,

բ. օտար լեզվի,

գ. հումանիտար առարկաների,

դ. մանրաթելերի, մանանյութի և մանվածքների ու գործվածքների տեսակների,

ե. մանածագործական արտադրության մեքենաների և սարքավորումների,

զ. նյութագիտության,

է. ընդհանուր հումանիտար և սոցիալ - տնտեսագիտական առարկաների:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը.

ա. մանածագործության,

բ. համակարգչային տեխնիկայի:

3) Սպորտային համալիր.

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ ինչպես նաև սոցիալական գործընկերության հիման վրա օգտվել համապատասխան կազմակերպությունների նյութատեխնիկական բազաներից:

15. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական տարվա սկիզբը, առկա ուսուցման ձևի համար, սահմանվում է սեպտեմբերի 1-ը, իսկ հեռակա, դրսեկության (էքստեռնատ) ձևերով ուսուցման դեպքում՝ համաձայն ուսումնական պլանների,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանգանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

- 4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,
- 5) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամը,
- 6) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

16. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները.

2) պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով.

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները.

4) պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները.

5) ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարման ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնափորձական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնասօժանողակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում.

6) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

17. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսանողների միջանկյալ ատեստավորում՝ ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով: Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել արդյունքի (մոդուլի) յուրացման ընթացքում կամ ավարտին,

2) որակավորման շնորհում՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման միջոցով,

3) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողի տեղեկացվում՝ կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին: Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

4) շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

5) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է երաշխավորի սույն չափորոշչով 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման արհեստավորի պատրաստվածության նկատմամբ սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանությունը:



## ԳԼՈՒԽ 6

### ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 2802 «ՄԱՆՎԱԾՔԻ ԵՎ ՄԱՆՎԱԾՔԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԵՆԹԱՎԱՐՊԵՏ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

18. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման կրթական ծրագիրն իրականացվում է հաշվի առնելով 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը, որը չպետք է սահմանափակի ուսումնական գործընթացի իրականացման եղանակների, ձևերի, մեթոդների ընտրության հնարավորությունները:

19. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը.

- 1) օգտվելով սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանից կազմում և հաստատում է մասնագիտության ուսումնական պլանը,
- 2) կարող է մասնագիտության ուսումնական պլանը կազմելիս փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանուր պահանջները,
- 3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը՝ պահպանելով արդյունքները և կատարման չափանիշները,
- 4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
- 5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
- 6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
- 7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլները

<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԸԱՀ 3-10-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային մշակույթ և էթիկա դրսևորելու, դեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողություններին
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները. բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները. գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրությունը (CV). դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները. բ. ճիշտ է ներկայացնում գործերընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակները. գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության կարողություններ. դ. ցուցաբերում է գործընկերոջը և դեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Տիրապետել վարքագծի և էթիկայի ներքին կանոններին , արդյունավետ աշխատել թիմում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.

	<p>բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները.</p> <p>դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին.</p> <p>ե. ճիշտ վերաբերմունք է դրևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.</p> <p>զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ՝ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:</p>
<b>Ուսումնասրության արդյունք 4</b>	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվել ղեկավարի հետ
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:</p>
<b>Ուսումնասրության արդյունք 5</b>	Դրևևորել քննադատական մտածողություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.</p> <p>բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.</p> <p>գ. իրականացնում է կառուցողական քննադատություն՝ ճիշտ բացատրելով կառուցողական քննադատության կարևորությունը:</p>
<b>Ուսումնասրության արդյունք 6</b>	Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ ու կոնֆլիկտներ
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.</p> <p>բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան).</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները.</p> <p>դ. բացահայտում և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում.</p> <p>ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.</p> <p>զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.</p> <p>է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ և արդյունավետ լուծումներ:</p>
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀՀ 3-10-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մովորողի մոտ ձևավորել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար

	մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Մահմանել ուսումնառության անձնական նպատակները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները.</p> <p>բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները.</p> <p>գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք.</p> <p>բ. ներկայացրած հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ.</p> <p>գ. կատարում է տեղեկատվության նպատակային առանձնացում/խմբավորում.</p> <p>դ. հաղորդումն իրականացնում է՝ ըստ իրավիճակի և լսարանի:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտություններն, ինչպիսիք են՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- պարզաբանումներ ստանալու ձգտումը,</li> <li>- գրառումներ կատարելը,</li> <li>- ամփոփելը.</li> </ul> <p>բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները.</p> <p>գ. ցուցաբերում է համոզելու կարողություն.</p> <p>դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունն ու դրանց միջև եղած տարբերությունները.</p> <p>բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.</p> <p>գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կատարել փաստաթղթավորում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերն ըստ դրանց նշանակության.</p> <p>բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը.</p> <p>գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:</p>
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	Ա.Ա.Օ 3-10-001

<b>Մոդուլի նպատակը</b>	Մովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերն ու մեխանիզմները.</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման ու հաշվառման կարգը.</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունն աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել կազմակերպություններում անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի (առողջարարության) և հիգիենայի (առողջագիտության) հասկացությունները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները.</p> <p>գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները.</p>

	դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:
<b>Ուսումնասրության արդյունք 4</b>	Ցուցաբերել առաջին օգնություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը.</p> <p>բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը.</p> <p>գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը՝ ճիշտ դնելով վիրակապ.</p> <p>դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները.</p> <p>ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը.</p> <p>զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՕՀ 3 - 10 - 001
<b>Մոդուլի նպատակը</b>	Տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնասրության արդյունք 1</b>	WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ)
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը.</p> <p>բ. բացել նոր փաստաթուղթ .</p> <p>գ. ստեղծել նոր օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, պայմանանշաններ, թվանշաններ.</p> <p>դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ.</p> <p>ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում.</p> <p>զ. փակել փաստաթուղթը.</p> <p>է. բացել առկա փաստաթուղթը.</p> <p>ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները:</p>
<b>Ուսումնասրության արդյունք 2</b>	Տեքստերի տարրական ֆորմատավորում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար.</p> <p>բ. նշել բառերը և տեքստային հատվածները.</p> <p>գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում.</p>

	<p>դ. կատարել տողերի հավասարեցում.</p> <p>ե. փոխել միջտողային տարածությունները .</p> <p>զ. փոխել տեքստի գույնը.</p> <p>է. փոխել տեքստի գունային ֆոնը.</p> <p>ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից.</p> <p>թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները.</p> <p>ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները.</p> <p>ժա. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը.</p> <p>ժբ. փոխել լուսանցքների խորությունները, ընտրել էջի ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքերը, ընտրել թղթի չափերը.</p> <p>ժգ. պատճենել տեքստը .</p> <p>ժդ. տեղափոխել տեքստը .</p> <p>ժե. տողադարձել տեքստը.</p> <p>ժզ. համարակալել էջերը:</p>
<b>Ուսումնասիրության արդյունք 3</b>	Փաստաթղթի պահպանում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը.</p> <p>բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը.</p> <p>գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:</p>
<b>Ուսումնասիրության արդյունք 4</b>	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. պատրաստել աղյուսակ.</p> <p>բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ.</p> <p>գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ.</p> <p>դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուններ աղյուսակի մեջ.</p> <p>ե. ջնջել աղյուսակի տողերը և սյունները.</p> <p>զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ.</p> <p>է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ.</p> <p>ը. փոխել աղյուսակի գծերի գույնը.</p> <p>թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:</p>
<b>Ուսումնասիրության արդյունք 5</b>	Գրաֆիկական խմբագրում և նկարագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ.</p> <p>բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը.</p>

	<p>գ. գծագրել կանոնավոր պատկերներ.</p> <p>դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով.</p> <p>ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները.</p> <p>զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտներըն իրար նկատմամբ.</p> <p>է. գծագրել տեքստային բլոկներ.</p> <p>ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները.</p> <p>թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները.</p> <p>ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:</p>
<b>Ուսումնասրության արդյունք 6</b>	Փաստաթղթի տպագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը.</p> <p>բ. իմանալ Print պատուհանի գործառույթները.</p> <p>գ. տպագրել փաստաթուղթը:</p>
<b>Ուսումնասրության արդյունք 7</b>	Ինտերնետում աշխատելու կարողություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը.</p> <p>բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը.</p> <p>գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը.</p> <p>դ. իմանալ History հրամանի նշանակությունը.</p> <p>ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը.</p> <p>զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը.</p> <p>է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը.</p> <p>ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը.</p> <p>թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից.</p> <p>ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից.</p> <p>ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները.</p> <p>ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա.</p> <p>ժգ. Ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից.</p> <p>ժդ. իմանալ Էլեկտրոնային փոստի նշանակությունը.</p> <p>ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:</p>



Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման **հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլները**

<b>Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԻՏ 3-10-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մովորողի մոտ ձևավորել ընդհանուր պատկերացումներ թեթև արդյունաբերության տեղի, դերի և նշանակության, դրա ենթաձյուղային կառուցվածքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության թեթև արդյունաբերության զարգացման նախադրյալների, մասնագիտացման հիմնական ուղղությունների ու հեռանկարների մասին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել թեթև արդյունաբերության ձևավորման պատմական անցյալը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության ձևավորման և կայացման պատմական ուղին. բ. ճիշտ է բացատրում թեթև արդյունաբերության կապը տնտեսության մյուս ճյուղերի հետ. գ. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության հումքային բազան և դրանում ընթացող տարածաշրջանային ու տեսակային կազմի փոփոխությունները :
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել թեթև արդյունաբերության ներկայիս համայնապատկերը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության ենթաձյուղային կառուցվածքը. բ. ճիշտ է թվարկում թեթև արդյունաբերության բուսական, կենդանական և քիմիական (արհեստական, սինթետիկ) ծագման հումքատեսակներն ու դրանց հարաբերակցության փոփոխությունների համաշխարհային և տարածաշրջանային միտումները. գ. ճիշտ է թվարկում համաշխարհային թեթև արդյունաբերության ժամանակակից առաջատար երկրներն՝ ըստ համաշխարհային շուկայում դրանց ունեցած միջազգային մասնագիտացման ուղղությունների. դ. ճիշտ է մեկնաբանում ՀՀ թեթև արդյունաբերության ձևավորման նախադրյալները և ներկա իրավիճակը. ե. ճիշտ է համեմատում խորհրդային և հետխորհրդային ժամանակահատվածներում ՀՀ թեթև արդյունաբերության զարգացման տեմպերը՝ ներկայացնելով համոզիչ եզրահանգումներ:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Գնահատել թեթև արդյունաբերության զարգացման միտումները

<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության ենթաճյուղերի բովանդակային տարբերությունները.</p> <p>բ. ճիշտ է մեկնաբանում թեթև արդյունաբերության ենթաճյուղերի զարգացման միտումները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության ոլորտի աշխատողի հիմնական զբաղմունքները.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության ոլորտի աշխատողի հիմնական պարտականությունները.</p> <p>ե. ճիշտ է գնահատում ՀՀ թեթև արդյունաբերության զարգացման առաջնահերթությունները.</p> <p>զ. ճիշտ է թվարկում ՀՀ ժամանակակից թեթև արդյունաբերության գլխավոր կենտրոնները, փաստացի աշխատող ընկերությունները, դրանցում թողարկվող հիմնական արտադրատեսակները և վերջիններիս սպառման շուկաները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել արդյունաբերության տարածքային (աշխարհագրական) տեղաբաշխման և զարգացման առանձնահատկությունները
	<p>ա. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության և դրա ենթաճյուղերի տարածքային տեղաբաշխման ավանդական կամ հին գործոնները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում թեթև արդյունաբերության և դրա ենթաճյուղերի տարածքային տեղաբաշխման նոր գործոնները.</p> <p>գ. ճիշտ է մեկնաբանում թեթև արդյունաբերության և դրա ենթաճյուղերի զարգացման բնական գործոնները.</p> <p>դ. ճիշտ է մեկնաբանում թեթև արդյունաբերության և դրա ենթաճյուղերի զարգացման հասարակական գործոնները:</p>
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԵՔՍՏԻԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԻՏ 3-10-002
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոլորողի մոտ ձևավորել ընդհանուր պատկերացումներ թեթև արդյունաբերության կառուցվածքում տեքստիլ արդյունաբերության կարևորության, դրա դերի և նշանակության, ինչպես նաև հիմնական արտադրությունների զարգացման նախադրյալների, հեռանկարների ու դրանցում կիրառվող տեխնիկական միջոցների մասին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է յուրացրած լինի ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ «մոդուլը:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տեքստիլ արդյունաբերության բովանդակությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում տեքստիլ արդյունաբերությունը, որպես թեթև արդյունաբերության առաջատար ենթաճյուղ.</p> <p>բ. ճիշտ է մեկնաբանում «տեքստիլ» բառի իմաստը՝ միաժամանակ նշելով հիմնական տեքստիլ արտադրություններն ու արտադրատեսակները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տեքստիլագործի հիմնական զբաղմունքները.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում տեքստիլագործի հիմնական աշխատանքային պարտականությունները.</p>

	<p>ե. ճիշտ է պարզաբանում համաշխարհային տեքստիլ արդյունաբերության տեղաբաշխման սկզբունքները.</p> <p>զ. ճիշտ է գնահատում ՀՀ տեքստիլ արդյունաբերության ներկա վիճակը՝ միաժամանակ մատնանշելով վերջինիս զարգացման հեռանկարները:</p>
<b>Ուսումնասիրության արդյունք 2</b>	Ներկայացնել տեքստիլ արդյունաբերության հումքային բազայի և արտադրական կառուցվածքի առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում տեքստիլ արդյունաբերության բուսական ծագման հումքային բազան՝ թելատու մշակաբույսերը, ինչպես նաև դրանց տարածման շրջաններն ու արտադրող առաջատար երկրները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում տեքստիլ արդյունաբերության կենդանական ծագման հումքային բազան, ինչպես նաև ոչխարաբուծության, այծաբուծության, ուղտաբուծության, ճագարաբուծության, ուղտայծաբուծության և շերամապահության տարածման շրջաններն ու առաջատար երկրները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում բամբակե մանվածքի (թելի) արտադրությունը.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում բրդե մանվածքի (թելի) արտադրությունը.</p> <p>ե. ճիշտ է բացատրում մետաքսե մանվածքի (թելի) արտադրությունը.</p> <p>զ. ճիշտ է բացատրում վուշե մանվածքի (թելի) արտադրությունը.</p> <p>է. ճիշտ է պարզաբանում արհեստական և սինթետիկ մանվածքների (թելերի) արտադրությունները:</p>
<b>Ուսումնասիրության արդյունք 3</b>	Ներկայացնել տեքստիլ արդյունաբերության, մասնավորապես, մանածագործության արտադրական գործընթացները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է բացատրում հումքի գտման, մաքրման և լվացման գործընթացները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում հումքի նախնական (սկզբնական) մշակման գործընթացների հաջորդականությունը.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում զգման, ոլորման, ձգման, սանդերքագզման, ներկման, փաթաթման, հյուսման և այլ գործընթացները:</p>
<b>Ուսումնասիրության արդյունք 4</b>	Ներկայացնել տեքստիլ արդյունաբերության մեջ կիրառվող տեխնիկական միջոցները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է թվարկում ձևավոր մանվածք արտադրող մեքենաները և սարքավորումները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ժապավենաթել արտադրող մեքենաները և սարքավորումները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում հաստաթել արտադրող մեքենաները և սարքավորումները.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում երիզներ և ցանցեր հյուսող մեքենաներն ու սարքավորումները.</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում շղարշ և ժանյակ արտադրող մեքենաներն ու սարքավորումները.</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում մահուդ արտադրող մեքենաները և սարքավորումները.</p> <p>է. ճիշտ է ներկայացնում ոլորող մեքենաները և սարքավորումները.</p> <p>ը. ճիշտ է ներկայացնում սանդերքող մեքենաները և սարքավորումները:</p>
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆՐԱԹԵԼ ԵՎ ՄԱՆՎԱԾՔ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԻՏ 3-10-003

<b>Մոդուլի նպատակը</b>	Մովորողի մոտ ձևավորել ընդհանուր պատկերացումներ մանրաթելի և մանվածքի (թելի), ինչպես նաև վերջինիս արտադրության կազմակերպման հիմնական գործընթացային համակարգերի մասին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ» և ՄԻՏ 3-10-002 «Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ» մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Բացատրել մանրաթելի և դրա տեսակների հատկանիշները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է սահմանում «մանրաթելը» (կամ «տեքստիլ մանրաթելը») բ. ճիշտ է ներկայացնում տարրական և տեխնիկական մանրաթելերն ու դրանց հիմնական տարբերությունները. գ. ճիշտ է ներկայացնում բնական՝ բուսական, կենդանական և հանքային ծագման մանրաթելերը. դ. ճիշտ է ներկայացնում քիմիական՝ արհեստական և սինթետիկ մանրաթելերը:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Բացատրել մանրաթելերի ֆիզիկա-մեխանիկական հատկանիշները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է բացատրում մանրաթելի գծային խտությունը՝ ներկայացնելով վերջինիս չափման միավորը («տեքսը») բ. ճիշտ է ներկայացնում մանրաթելի երկարության և ամրության բնութագրիչները. գ. ճիշտ է ներկայացնում մանրաթելի առաձգականության (ձգման, սեղմման) հատկանիշը. դ. ճիշտ է ներկայացնում մանրաթելի դիմադրողականության (ձկման, ոլորման, մաշելիության, սահքի) հատկանիշը. ե. ճիշտ է բացատրում մանրաթելի ջերմահաղորդականության հատկանիշը. զ. ճիշտ է մեկնաբանում մանրաթելի էլեկտրահաղորդականության հատկանիշը. է. ճիշտ է ներկայացնում մանրաթելի խոնավաթափանցելիության հատկանիշը:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել մանվածքի արտադրության (մանածագործության) համակարգերը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է սահմանում «մանվածքը». բ. ճիշտ է ներկայացնում «մանրաթելի» և «մանվածքի» տարբերությունները. գ. ճիշտ է թվարկում մանվածքի արտադրության տեխնոլոգիական անցումների հաջորդականությունը. դ. ճիշտ է բացատրում մանվածքի արտադրության սարքային (ապարատային) համակարգը. ե. ճիշտ է ներկայացնում մանվածքի արտադրության սանդեղազգման (սովորական) համակարգը. զ. ճիշտ է ներկայացնում մանվածքի արտադրության սանրման (սանրային) համակարգը. է. ճիշտ է բացատրում մանվածքի արտադրության խառնաթելային (մելանժե) համակարգը. ը. ճիշտ է ներկայացնում մանածագործական հիմնական զբաղմունքները. թ. ճիշտ է ներկայացնում մանածագործի հիմնական աշխատանքային պարտականությունները:

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԱՀՈՒՄՔԻ ՓԽՐԵՑՈՒՄ ԵՎ ԳԶՈՒՄ »**

<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԻՏ 3-10-004
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել մանահումքի մասնաբաժանման, գուման, փխրեցման և գզման, ինչպես նաև համաչափ (հավասարաչափ) մանանյութի արտադրման ու փխրեցնող-գզող մեքենայի վրա աշխատելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ», ՄԻՏ 3-10-002 «Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ» և ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք» մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնասիրության արդյունք 1</b>	Մանահումքի նախապատրաստում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է դասավորում մանահումքի հակերը՝ մանրաթելի մամլած տրցակները. բ. ճիշտ է կատարում մանահումքի հակերի ձեռքով կամ ցանցասեղներով մասնաբաժանումն ավելի փոքր պատառիկների . գ. ճիշտ է մաքրում մանահումքի հակերը և պատառիկները՝ հեռացնելով մոլաբույսերի մնացորդներն ու կոշտուկները. դ. ճիշտ է թելատում նախապես ջերմամշակված վուշահումքը. ե. ճիշտ է առանձնացնում բրդահումքի օտարածին խառնուկները. զ. ճիշտ է թելատում բոժոժի կծիկները. է. ճիշտ է առանձնացնում վնասված (կարճ) մանրաթելերը:
<b>Ուսումնասիրության արդյունք 2</b>	Փխրեցնող - գզող միացքի (ագրեգատի) տեխնիկատեխնոլոգիական բնութագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ցուցադրում փխրեցնող - գզող միացքի աշխատանքային հիմնական հանգույցներն ու մասերը. բ. ճիշտ է բացատրում փխրեցնող - գզող միացքի աշխատանքային հիմնական գործողությունները և դրանց սկզբունքները. գ. ճիշտ է մեկնաբանում փխրեցնող - գզող միացքի աշխատանքի ընթացքում առաջացող ընդհատումների պատճառները. դ. ճիշտ է բացահայտում փխրեցնող - գզող միացքի անսարքությունները. ե. ճիշտ է սահմանում տարբեր սերնդի և մակնիշի փխրեցնող - գզող միացքների առավելություններն ու թերությունները. զ. ճիշտ է ներկայացնում փխրեցնող-գզող միացքի աշխատանքային հանգույցների փոխդասավորությունը:
<b>Ուսումնասիրության արդյունք 3</b>	Փխրեցնող - գզող միացքի տեխնոլոգիական շահագործում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է կատարում փխրեցնող - գզող միացքի տեխնոլոգիական շահագործման նախապատրաստական աշխատանքները. բ. ճիշտ է լցնում փխրեցնող - գզող միացքի մանախցիկները. գ. ճիշտ է միացնում և գործարկում փխրեցնող - գզող միացքը. դ. ճիշտ է վերահսկում փխրեցնող - գզող միացքի աշխատանքային գործողությունները. ե. ճիշտ է վերացնում մանրաթելերի խզվածքները՝ կատարելով համապատասխան միահյուսումներ.

	<p>գ. ճիշտ է վերացնում փխրեցնող - գգող միացքի աշխատանքի ընթացքում առաջացող մանր անսարքությունները.</p> <p>է. ճիշտ է պահպանում փխրեցնող - գգող միացքի շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Մանահումքի գգում, խառնակում և մանանյութի արտադրություն
	<p>ա. ճիշտ է ներկայացնում միջնամանրաթելային մանահումքի գտման սանդերքագգման (սովորական) համակարգը.</p> <p>բ. ճիշտ է բացատրում մանահումքի սանդերքագգման համակարգի ինքնաշարժ սնուցմամբ միացքի (ագրեգատի) աշխատանքային գործընթացը.</p> <p>գ. ճիշտ է ցուցադրում մանահումքի սանդերքագգման համակարգի ձեռքով սնուցմամբ միացքի աշխատանքային գործընթացը.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում մանահումքի սանդերքագգման համակարգում խառնիչի դերը և մանահումքի խառնակման նշանակությունը.</p> <p>ե. ճիշտ է բացատրում դանակավոր թմբուկներում մանահումքի գգման գործընթացը.</p> <p>զ. ճիշտ է տեղահանում գգված մանահումքով դանակավոր թմբուկները.</p> <p>է. ճիշտ է կատարում գգված մանահումքի տեղափոխումն ինքնաշարժ (ավտոմատ) պտտագլխիկների վրա.</p> <p>ը. ճիշտ է վերահսկում գգված մանահումքից համաչափ և բարակ մանանյութի արտադրական գործընթացը:</p>
<b>ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԱՆՅՈՒԹԻ ՄԱՆՐՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԻՏ 3-10-005
<b>Մոդուլի նպատակը</b>	Մովորողի մոտ ձևավորել մանանյութի սանրման արտադրական և սանրող մեքենայի վրա աշխատելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ 3-010-001»Անվտանգություն և առաջին օգնություն», ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ», ՄԻՏ 3-10-002 «Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ» , ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք» և ՄԻՏ 3-10-004 «Մանահումքի փխրեցում և գգում» մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Սանրող մեքենայի տեխնիկատեխնոլոգիական բնութագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ցուցադրում սանրող մեքենայի աշխատանքային հիմնական միացքները (ագրեգատներն), հանգույցներն ու մասերը.</p> <p>բ. ճիշտ է բացատրում սանրող մեքենայի աշխատանքային հիմնական գործողությունները և դրանց սկզբունքները.</p> <p>գ. ճիշտ է մեկնաբանում սանրող մեքենայի աշխատանքի ընթացքում առաջացող ընդհատումների պատճառները.</p> <p>դ. ճիշտ է բացահայտում սանրող մեքենայի անսարքությունները.</p> <p>ե. ճիշտ է սահմանում տարբեր մակնիշի սանրող մեքենաների առավելություններն ու թերությունները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Սանրող մեքենայի տեխնոլոգիական շահագործում

<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է կատարում սանրող մեքենայի տեխնոլոգիական շահագործման նախապատրաստական աշխատանքները.</p> <p>բ. ճիշտ է լիցքավորում սանրող մեքենայի նախամանվածքային կոճերն ու գլանակները.</p> <p>գ. ճիշտ է միացնում և գործարկում սանրող մեքենան.</p> <p>դ. ճիշտ է վերահսկում սանրող մեքենայի աշխատանքային գործողությունները.</p> <p>ե. ճիշտ է վերացնում սանրող մեքենայի աշխատանքի ընթացքում առաջացող մանր անսարքությունները.</p> <p>զ. ճիշտ է պահպանում սանրող մեքենայի շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Մանանյութի սանրման արտադրություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում մանահումքի սանրման դերն ու նշանակությունը.</p> <p>բ. ճիշտ է կատարում մանահումքի սանրմամբ տարատեսակ խառնուկների հեռացումը.</p> <p>գ. ճիշտ է կատարում մանահումքում մանրաթելերի հարթուղումը.</p> <p>դ. ճիշտ է ապահովում մանահումքում մանրաթելերի գույքընթացականությունը.</p> <p>ե. ճիշտ է ապահովում բարձր համահարթվածությամբ սանրածապավենի արտադրությունը:</p>
<b>ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԺԱՊԱՎԵՆԱԹԵԼԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԻՏ 3-10-006
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել ժապավենաթել արտադրող մեքենայի վրա աշխատելու գործնական կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱՍՕ 3-010-001«Անվտանգություն և առաջին օգնություն», ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ», ՄԻՏ 3-10-002 «Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ» , ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք» , ՄԻՏ 3-10-004 «Մանահումքի փխրեցում և գզում» և ՄԻՏ 3-10-005 «Մանահումքի սանրում» մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ժապավենաթելի ֆիզիկա - մեխանիկական հատկանիշների և արտադրության մասին ընդհանուր պատկերացման ձևավորում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում ժապավենաթելի կառուցվածքը, մակերևութային հարթուղվածությունը, հաստությունը և գծային խտությունը.</p> <p>բ. ճիշտ է բացատրում սանրածապավենից ժապավենաթելի ստացման տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը.</p> <p>գ. ճիշտ է բացատրում ժապավենաթելի պատրաստման ընթացքում արտադրական թափոնների առաջացման պատճառները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Բացատրել ժապավենաթել արտադրող մեքենաների տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է թվարկում ժապավենաթել արտադրող մեքենաները.

	<p>բ. ճիշտ է ներկայացնում ժապավենաթել արտադրող մեքենաների ընդհանուր կառուցվածքը.</p> <p>գ. ճիշտ է ցուցադրում ժապավենաթել արտադրող մեքենաների հիմնական աշխատանքային հանգույցները՝ բացատրելով դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը.</p> <p>դ. ճիշտ է բացատրում ժապավենաթել արտադրող մեքենաների աշխատանքային սկզբունքները:</p>
<b>Ուսումնասիրության արդյունք 3</b>	Ժապավենաթել արտադրող մեքենայի շահագործում և արտադրական գործընթացի հսկողություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում ժապավենաթել արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունները.</p> <p>բ. ճիշտ է միացնում և անջատում ժապավենաթել արտադրող մեքենան.</p> <p>գ. ճիշտ է կատարում ժապավենաթելի համահարթեցումը և համահավասարեցումը.</p> <p>դ. ճիշտ է կատարում ժապավենաթելի ձգումը՝ միաժամանակ կարգավորելով նախատեսվող ձգվածությունը.</p> <p>ե. ճիշտ է իրականացնում ժապավենաթելում մանրաթելերի գույրընթացականության ապահովումը.</p> <p>զ. ճիշտ է վերացնում ժապավենաթելի խզվածքները.</p> <p>է. ճիշտ է տեղադրում ժապավենաթելի համար նախատեսված դատարկ լազանները.</p> <p>ը. ճիշտ է փոխարինում ժապավենաթելի լցումված լազանները.</p> <p>թ. ճիշտ է ներկայացնում ժապավենաթելի արտադրության ընթացքում առաջացող թափոնների կրճատման միջոցառումները:</p>
<b>Ուսումնասիրության արդյունք 4</b>	Ներկայացնել ժապավենաթել արտադրող մեքենայի տեխնիկական խնամքի առանձնահատկությունները
	<p>ա. ճիշտ է փոխարինում ժապավենաթել արտադրող մեքենայի մաշված պահեստամասերը և հարմարանքները.</p> <p>բ. ճիշտ է պահպանում ժապավենաթել արտադրող մեքենայի տեխնիկական շահագործման կանոնները (յուղում, լվացում, հովացում, լցավորում, թափոնների հեռացում).</p> <p>գ. ճիշտ է պահպանում ժապավենաթել արտադրող մեքենայի ընթացիկ վերանորոգման ժամանակացույցը.</p> <p>դ. ճիշտ է իրականացնում ժապավենաթել արտադրող մեքենայի հերթափոխային ընդունման և հանձնման արարողակարգը:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՍՏԱԹԵԼԻ (ՆԱՄԱԹԵԼԻ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԻՏ 3-10-007
<b>Մոդուլի նպատակը</b>	Մովորողի մոտ ձևավորել հաստաթել (նախաթել, սկզբնաթել) արտադրող մեքենայի վրա աշխատելու գործնական կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ 3-010-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ», ՄԻՏ 3-10-002 «Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ» , ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք» , ՄԻՏ 3-10-004 «Մանահումքի փխրեցում և զգում» , ՄԻՏ 3-10-005 «Մանահումքի սանրում» և ՄԻՏ 3-10-006 «Ժապավենաթելի արտադրության տեխնոլոգիա» մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար



	մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Հաստատելի ֆիզիկա - մեխանիկական հատկանիշների և արտադրության մասին ընդհանուր պատկերացման ձևավորում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում հաստատելի կառուցվածքը, մակերևութային հարթուղվածությունը, հաստությունը և գծային խտությունը. բ. ճիշտ է բացատրում ժապավենաթելց հաստաթելի ստացման տեխնոլոգիական գործընթացների հաջորդականությունը. գ. ճիշտ է բացատրում հաստաթելի պատրաստման ընթացքում արտադրական թափոնների առաջացման պատճառները:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել հաստաթել արտադրող մեքենաների տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում հաստաթել արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունները. բ. ճիշտ է թվարկում հաստաթել արտադրող մեքենաները. գ. ճիշտ է ներկայացնում հաստաթել արտադրող մեքենաների ընդհանուր կառուցվածքը. դ. ճիշտ է ցուցադրում հաստաթել արտադրող մեքենաների հիմնական աշխատանքային հանգույցները՝ բացատրելով դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը. ե. ճիշտ է բացատրում հաստաթել արտադրող մեքենաների աշխատանքային սկզբունքները:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Հաստաթել արտադրող մեքենայի շահագործում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է միացնում և անջատում հաստաթել արտադրող մեքենան. բ. ճիշտ է հետևում թելակոճերի կամ իլիկների լիցքավորմանը հաստաթելով. գ. ճիշտ է կատարում հաստաթելով փաթաթված թելակոճերի կամ իլիկների փոխարինումը. դ. ճիշտ է կատարում հաստաթել արտադրող մեքենայի փեղկերի թափավազքի արագության կարգավորումը. ե. ճիշտ է ընտրում հաստաթել արտադրող մեքենայի նկատմամբ սեփական աշխատատեղն ու աշխատանքային կեցվածքը:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Բացատրել հաստաթելի արտադրության գործընթացի հսկողությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է վերացնում հաստաթելի խզվածքները. բ. ճիշտ է վերացնում ժապավենաթելի ձգումները և կարգավորում է հաստաթելի ձգվածությունը. գ. ճիշտ է հեռացնում հաստացած և/կամ բարակացած ընդհատումները ( բացթողումները). դ. ճիշտ է հետևում սանրակատարների աշխատանքին՝ սանրակատարներով ժապավենաթելի սահուն ընթացքին և հաստաթելի փաթաթմանը:
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Բացատրել հաստաթել արտադրող մեքենայի տեխնիկական խնամքի առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է փոխարինում հաստաթել արտադրող մեքենայի մաշված պահեստամասերը և հարմարանքները. բ. ճիշտ է հավաքում և հեռացնում արտադրական թափոնները. գ. ճիշտ է պահպանում հաստաթել արտադրող մեքենայի տեխնիկական շահագործման կանոնները (յուղում, լվացում, հովացում, լցավորում, թափոնների հեռացում).

	<p>դ. ճիշտ է պահպանում հաստաթել արտադրող մեքենայի ընթացիկ վերանորոգման ժամանակացույցը.</p> <p>ե. ճիշտ է իրականացնում հաստաթել արտադրող մեքենայի հերթափոխային ընդունման և հանձնման արարողակարգը:</p>
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՆԱԽԱՄԱՆՎԱԾՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ »</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԻՏ 3-10-008
<b>Մոդուլի նպատակը</b>	Մովորողի մոտ ձևավորել նախամանվածք արտադրող (մանածագործական) մեքենայի վրա աշխատելու և նախամանվածք պատրաստելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ 3-010-001»Անվտանգություն և առաջին օգնություն», ՄԻՏ 3-10-001 «Թեթև արդյունաբերության հիմունքներ», ՄԻՏ 3-10-002 «Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ» , ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք» , ՄԻՏ 3-10-004 «Մանահումքի փխրեցում և զգում» , ՄԻՏ 3-10-005 «Մանահումքի սանրում» , ՄԻՏ 3-10-006 «Ժապավենաթելի արտադրության տեխնոլոգիա» և ՄԻՏ 3-10-007 «Հաստաթելի (նախաթելի )արտադրության տեխնոլոգիա» մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Նախամանվածքի ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների և արտադրության մասին ընդհանուր պատկերացման ձևավորում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում նախամանվածքի ֆիզիկա - մեխանիկական հատկանիշները.</p> <p>բ. ճիշտ է բացատրում նախամանվածքի և հաստաթելի (նախաթելի) տարբերությունները.</p> <p>գ. ճիշտ է բացատրում նախամանվածքի ոլորման տեխնոլոգիական առանձնահատկությունները.</p> <p>դ. ճիշտ է մեկնաբանում նախապես ոլորված նախամանվածքի հետագա ձգման տեխնոլոգիական առանձնահատկությունները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Բացատրել նախամանվածք արտադրող մեքենա -սարքավորումների տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում նախամանվածք արտադրող մանածագործի աշխատանքային պարտականությունները.</p> <p>բ. ճիշտ է թվարկում նախամանվածք ոլորող և ձգող մեքենա - սարքավորումները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում նախամանվածք ոլորող և ձգող մեքենա - սարքավորումների ընդհանուր կառուցվածքը.</p> <p>դ. ճիշտ է բացատրում նախամանվածք ոլորող և ձգող մեքենա - սարքավորումների հիմնական աշխատանքային հանգույցների տեխնոլոգիական նշանակությունը.</p> <p>ե. ճիշտ է բացատրում նախամանվածք ոլորող և ձգող մեքենա - սարքավորումների աշխատանքային սկզբունքները` մանման տարբեր համակարգերում:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Նախամանվածք արտադրող (ոլորող, ձգող) մեքենաների շահագործում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է միացնում և անջատում նախամանվածք ոլորող մեքենան.</p> <p>բ. ճիշտ է միացնում և անջատում նախամանվածք ձգող մեքենան.</p>

	<p>գ. ճիշտ է կատարում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների տեխնիկական շահագործման հաջորդական գործողությունները.</p> <p>դ. ճիշտ է ապահովում նախամանվածք ոլորող և ձգող մեքենայի անխափան աշխատանքը.</p> <p>ե. ճիշտ է հեռացնում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաներում կուտակված փոշին ու մազվուկ թափոնները:</p>
<b>Ուսումնասիրության արդյունք 4</b>	Նախամանվածքի արտադրության գործընթացի հսկողության իրականացում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է իրականացնում նախամանվածքի համաչափ ոլորումը.</p> <p>բ. ճիշտ է կատարում նախամանվածքի համաչափ ձգումները.</p> <p>գ. ճիշտ է ապահովում նախամանվածքի պահանջվող հաստությամբ ձգվածությունը.</p> <p>դ. ճիշտ է հետևում նախամանվածքի կծկմանը (փաթաթմանը):</p>
<b>Ուսումնասիրության արդյունք 5</b>	Ներկայացնել նախամանվածք արտադրող (ոլորող, ձգող) մեքենաների տեխնիկական խնամքի առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ախտորոշում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների մանր անսարքությունները.</p> <p>բ. ճիշտ է վերացնում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների մանր անսարքությունները.</p> <p>գ. ճիշտ է պահպանում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների շահագործման տեխնիկական ու անվտանգության կանոնները.</p> <p>դ. ճիշտ է պահպանում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների ընթացիկ վերանաորոգման ժամանակացույցը.</p> <p>ե. ճիշտ է իրականացնում նախամանվածք ոլորող և ձգող մեքենաների հերթափոխային ընդունման ու հանձնման արարողակարգը:</p>
<b>ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆՎԱԾՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԻՏ 3-10-009
<b>Մոդուլի նպատակը</b>	Մովորողի մոտ ձևավորել նախամանվածքի մանման և մանող (մանածագործական) մեքենայի վրա աշխատելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ 3-010-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ՄԻՏ 3-10-003 «Մանրաթել և մանվածք», ՄԻՏ 3-10-004 «Մանախումքի փխրեցում և գզում», ՄԻՏ 3-10-005 «Մանախումքի սանրում», ՄԻՏ 3-10-006 «Ժապավենաթելի արտադրության տեխնոլոգիա», ՄԻՏ 3-10-007 «Հաստաթելի (նախաթելի) արտադրության տեխնոլոգիա» և ՄԻՏ 3-10-008 «Նախամանվածքի արտադրություն» մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնասիրության արդյունք 1</b>	Ներկայացնել մանող (մանածագործական) մեքենայի տեխնիկական բնութագիրը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է բացատրում մանող/մանածագործական մեքենայի նշանակությունը վերջնամշակված թելի արտադրության

	<p>գործընթացում.</p> <p>բ. ճիշտ է բացատրում մանող/մանածագործական մեքենայի ձգման գործընթացը.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում մանող/մանածագործական մեքենայի ոլորման գործընթացը.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում մանող/մանածագործական մեքենայի կծկման (փաթաթման) գործընթացը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Բացատրել մանող (մանածագործական) մեքենայի աշխատանքային հիմնական հանգույցների կառուցվածքը և աշխատանքային սկզբունքները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում մանող/մանածագործական մեքենայի հիմնական աշխատանքային հանգույցները՝ կմախքը, շարժակը, նախամանվածքային հենակը.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում ձգման սարքի կառուցվածքը և բացատրում է վերջինիս աշխատանքային սկզբունքները.</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ոլորող սարքի կառուցվածքը և բացատրում է վերջինիս աշխատանքային սկզբունքները.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում կծկող (փաթաթող) սարքի կառուցվածքը և բացատրում է վերջինիս աշխատանքային սկզբունքները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել մանող (մանածագործական) մեքենայի տեխնոլոգիական գործընթացները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է կատարում նախամանվածքի տեղադրումը նախամանվածքային հենակի վրա.</p> <p>բ. ճիշտ է կատարում նախամանվածքի լիցքավորումը ձգող սարքի միջոցով.</p> <p>գ. ճիշտ է կատարում մանվածքի կծկումը (փաթաթումը) պարկուճների վրա.</p> <p>դ. ճիշտ է կատարում մանվածքով փաթաթված պարկուճների տեղահանումն ու հանձնումը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Բացահայտել մանվածքի արտադրական խոտանների և ցուցադրել դրանց վերացման միջոցառումները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է բացահայտում մանվածքի արտադրական խոտանները.</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում մանվածքի արտադրական խոտանների վերացման միջոցառումները.</p> <p>գ. ճիշտ է բացատրում մանվածքի կծկման (փաթաթման) խոտանները և դրանց վերացման միջոցառումները.</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում մանվածքի արտադրության (մանածագործության) ընթացքում առաջացող թափոնները և դրանց վերամշակման տեխնիկական հնարավորությունները:</p>

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության 2802 «Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման օրինակելի ուսումնական պլան

N	Առարկայախմբեր, առարկաներ և մոդուլներ	Շաբաթների քանակը	Ուսանողի առավելագույն բեռնվածությունը (ժամ )	Պարտադիր լսարանային պարապմունքներ (ժամ )	Ուսուցման երաշխավորվող տարին
	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ</b>				
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	1
2.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		27	18	1
3.	Իրավունքի հիմունքներ		54	36	1
4.	Պատմություն		54	36	1
5.	Օտար լեզու		81	60	1
6.	Ֆիզիկական կուլտուրա		54	54	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>378</b>	<b>276</b>	
	<b>ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ</b>				
1.	Էկոլոգիայի հիմունքներ		54	36	1
2.	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		27	18	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>81</b>	<b>54</b>	
	<b>ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>				
1.	Ընդհանուր աշխատանքային գործունեության հիմունքներ		54	36	1
2.	Հաղորդակցություն		54	36	1
3.	Անվտանգություն և առաջին օգնություն		54	36	1
4.	Համակարգչային օպերատորության հիմունքներ		81	54	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>243</b>	<b>162</b>	
	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>				
1.	Թեթև արդյունաբերության հիմունքներ		54	36	1
2.	Տեքստիլ արդյունաբերության հիմունքներ		81	54	1
3.	Մանրաթել և մանվածք		54	36	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>189</b>	<b>126</b>	
	<b>ՀՄՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>				
1.	Մանահումքի փիրեցում և զգում		81	54	1
2.	Մանակյուրթի սակրում		54	36	1
3.	Ժապավենաթելի արտադրության տեխնոլոգիա		81	54	1
4.	Հաստաթելի (նախաթելի) արտադրության տեխնոլոգիա		81	54	1
5.	Նախամանվածքի արտադրություն		54	36	1
6.	Մանվածքի արտադրություն		54	36	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>405</b>	<b>270</b>	
	<b>ԸՆՏՐՈՎԻ</b>		81	54	1
	<b>ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ</b>			30	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>27</b>	<b>1377</b>	<b>972</b>	
	<b>ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		100		
	<b>ՊՐԱԿՏԻԿԱ</b>	12			
	<b>ՄԻՋԱՆԿՑԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ</b>	2			
	<b>ՊԵՏԱԿԱՆ ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ</b>	1			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>42</b>			

